

ՄԱՅԻՍ 2022

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	7
1.3. Ջրահեռացման համակարգ	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	8
1.5. Էներգահամակարգ	9
1.6. Մեքենա-մեխանիզմներ	9
2. Առևտրային տնօրինություն	11
2.1. Բաժանորդների տվյալներ	12
2.2. Հասույթ	12
2.3. Գանձում	13
2.4. Դեֆիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	14
2.5. Ջրաչափեր	15
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	16
3. Տեխնիկական տնօրինություն	17
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	18
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	19
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	21
3.4. Ջրատար համակարգի բարելավում	22
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	25
3.6. 1-85 թեժ գիծ	26
4. Լրատվական ծառայություն	27
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	30
5.1. Փաստաթղթերի մշակում	31
5.2. Դասընթացներ/սեմինարներ	31
5.3. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	33
5.4. ԱՎՕ-ների և վկայագրերի փորձաքննության աշխատանքներ ..	33
6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ	34
6.1. Համակարգչային ցանց	35
6.2. Բնտերակտիվ համակարգ	35

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարառոտողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

Քաղաք Երևան

«Հարավ» տեղամասի սպասարկման տարածք

● «Հարավ» տեղամասի աշխատակիցների կողմից Ներքին Չարբախ 5փողոցում $d=50$ մմ $L=650$ գծ/մ պողպատե քայքայված ջրագիծը փոխարինվել է $d=160$ մմ $L=220$ գծ/մ և $d=110$ մմ $L=350$ գծ/մ պոլիէթիլային խողովակներով, իրականացվել են անհատական միացումներ $d=25$ մմ $L=300$ գծ/մ ընդհանուր երկարությամբ, սահմանազատման կետում տեղադրվել է թվով 25 ջրաչափական դիտահոր և 25 ջրաչափական սարք, հիմնահատակ կառուցվել է թվով 1 հատ D-1000, H-1000 դիտահոր:



● «Հարավ» տեղամասի աշխատակիցների կողմից Ներքին Շենգավիթ 13 փողոցում $d=50$ մմ $L=140$ գծ/մ պողպատե քայքայված ջրագիծը փոխարինվել է $d=63$ մմ $L=106$ գծ/մ պոլիէթիլային խողովակներով, իրականացվել են անհատական միացումներ $d=25$ մմ $L=90$ գծ/մ ընդհանուր երկարությամբ, սահմանազատման կետում տեղադրվել է թվով 18 ջրաչափական դիտահոր և 16 ջրաչափական սարք:



● «Հարավ» տեղամասի աշխատակիցների կողմից Շիրակի փողոց «Կարմիր Բլուր» գերեզմանատան մոտ $d=100$ մմ $L=140$ գծ/մ թուջե վթարված ջրագիծը փոխարինվել է $d=110$ մմ $L=100$ գծ/մ և $d=63$ մմ $L=39$ գծ/մ պոլիէթիլային խողովակներով:



● Արարատի մարզի Բյուրավան համայնքի Կոմիտասի փողոցի $d=75$ մ պոլիէթիլենային ջրագիծը, որը կառուցված էր անորակ, ստանդարտներին չհամապատասխանող խողովակներով, գտնվում էր վթարային վիճակում: Հաճախակի կրկնվող վթարների հետևանքով ջուրը լցվում էր սեփական տնատիրությունների տարածքները և նկուղները, առաջացնելով բնակիչ-բաժանորդների դժգոհությունը: Արտաշատ տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է $d=110$ մ 680գծ/մ ջրագիծ և իրականացվել են $d=20$ մ 160գծ/մ ընդհանուր երկարությամբ անհատական միացումներ: Տեղադրվել է թվով 10 ջրաչափական դիտահոր և $d=15$ մ ջրաչափական սարք:



Մայիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1983
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	62962
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	55300
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	19160
Ջրաչափական հանգույցներ ուսուժասպիրություն, սխեմաների կազմում	հատ	56
Շահագործումից հանված ջրագիծ	մ	2524.5
Կառուցված ջրագիծ	մ	3443
Կառուցված կոյուղագիծ	մ	368.6
Վերացված գաղտնի վթարներ	հատ	15
Փոխարինված փական	հատ	57
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	454
Մաքրված դիտահոր	հատ	651
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	17.4
<i>Վերացված վթարներ</i>	<i>Չափման միավոր</i>	<i>Քանակ</i>
Ջրամատակարարման ցանցում	հատ	1231
Ջրահեռացման ցանցում	հատ	2142
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	438

Մայիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	890	859	616

1.2. ԶՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է մայիս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	305	8	1	0	0	1	0	0	0	315
Փոխարինված	293	28	4	3	1	4	0	0	0	333
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	287	56	3	0	1	1	2	1	0	351
Ընդամենը	885	92	8	3	2	5	2	1	0	998

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 998 ջրաչափ: Կատարված աշխատանքների 89 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մայիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1430	185	15
2	Սաշտոց	1230	189	120
3	Շահումյան	1465	151	13
4	Զեյթուն	510	258	0
5	Շիրակ	1180	438	11.5
6	Արթիկ	0	81	0
7	Ապարան	0	32	0
8	Ալավերդի	1822	29	0
9	Աշոցք	0	3	0
10	Բերդ	50	12	0
11	Իջևան	70	36	0
12	Լոռի	3260	180	0
13	Նոյեմբերյան	0	18	0
14	Սպիտակ	0	16	0
15	Ստեփանավան	485	34	0
16	Թալին	0	9	6
17	Տաշիր	320	8	0
18	Չարենցավան	510	71	0
19	Արովյան	2145	75	0
20	Հրազդան	2580	101	0
21	Կենտրոն	180	274	30
22	Հյուսիս	0	215	30
23	Հարավ	0	316	0
24	Էրեբունի	0	163	12
25	Արմավիր	0	98	8
26	Արտաշատ	0	107	0
27	Էջմիածին	0	0	0
28	Աշտարակ	0	34	0
29	Արարատ	0	89	17
30	Մայիս	0	52	9

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի ըվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
31	Գավառ	350	14	8
32	Սևան	480	99	3
33	Մարտունի	0	23	0
34	Վարդենիս	190	15	0
35	Ճամբարակ	0	13	0
36	Դիլիջան	40	47	0
37	Վայք	40	11	0
38	Եղեգնաձոր	0	21	1,5
39	Ջերմուկ	0	40	0
40	Սիսիան	0	47	15
41	Գորիս	0	50	0
42	Կապան	1147	80	15
43	Մեղրի	190	31	0
	Ընդամենը	19674	3765	312.5

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՅՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանի տարածքում գտնվող պոմպակայանի պոմպը դադարել էր աշխատել: Պոմպը ապամոնտաժելուց հետո պարզ դարձավ, որ շարքից դուրս են եկել առանցքակալները և մեխանիկական խճուճները: Արդյունքում դրանք փոխարինվեցին նորով և այժմ պոմպակայանն աշխատում է անխափան:

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանը հոսանքազրկվել էր ամպրոպների պատճառով: Ձննման արդյունքում պարզ դարձավ, որ շարքից դուրս է եկել պարպիչը, որն էլ փոխարինվեց նորով և այժմ աշխատում է անխափան:

- Երևանի կեղտաջրերի մաքրման կայանում շարքից դուրս էր եկել ճաղավանդակի քերիչ սանրի շղթան, որն էլ փոխարինվեց և այժմ աշխատում է բնականոն ընթացքով: Կատարվել են նաև ոռոգման ցանցի բարելավման աշխատանքներ, որի արդյունքում փոխարինվել են խողովակների քայքայված հատվածները:

- Գավառի կեղտաջրերի պոմպակայանի պոմպերի հորի մեջ մեծ քանակի ավազ էր կուտակվել, որի արդյունքում պոմպերը խցանվել էին: Հորերը մաքրվեցին կուտակված ավազից և այժմ պոմպակայանը աշխատում է բնականոն ընթացքով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	66,482	21.6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	61,646	25.2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	176,128	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	89,398	21.6
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	112,280	19.8
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	17,018	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	11,541	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	18,300	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	16,700	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:


Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	110
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	17
Փականի տեղադրում	1
Այց	2
Պոմպի ապամոնտաժում	1

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Մայիս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար մայիս ամսվա ընթացքում նորոգվել են թվով 5 մեքենայի շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:



Թվով 9 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 10 մեքենամեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակուումի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենայի վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:


Փոխարինվել են թվով 71 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, գտիչներ, արգելակման հեղուկ և քսայուղեր:

Թվով 12 անվաղող նորոգվել է:

Թվով 2 մեքենայի մարտկոց փոխարինվել է նորերով:

Թվով 13 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 11 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուսի լարեր, ռելեններ, վառոցքի բանալիներ:



Թվով 4 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բեռնեքսները:

Թվով 2 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Թվով 5 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման

սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 9 մեքենայի վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիոդային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Նորոգվել է թվով 5 մեքենայի փոխանցման տուփերը, փոխարինվել են ատաճանիճները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Փոխարինվել են թվով 2 մեքենայի դեկային մեխանիզմները, ձգաձողերը և խաչուկները, իրականացվել է դրանց կարգավորում:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 5 մեքենա-մեխանիզմի վրա:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.06.2022 թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 579,836 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2022թ. մայիս ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	670,147	553,738	82,6
	Իրավաբանական անձ	30,549	26,098	85,4

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	734,569	579,260	78,9
	Իրավաբանական անձ	35,962	25,878	72,0

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 517 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Մայիս ամսվա ընթացքում ստուգաչափվել է 4613 ջրաչափ:


Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 05.2022
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2049	2106	271	4426
	Իրավաբանական անձ	69	105	13	187
	Ընդամենը	2118	2211	284	4613

Ստուգաչափված ջրաչափ



Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ մայիս ամսին փոխարինված 4613 ջրաչափերի մոտ 54%-ը (կամ 2495 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ: Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 189,651 մ³ հասույթ: Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2022թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Մայիս ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,188 մլն. դրամ (99 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում նախկինում կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում,

ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը հաշվետու ամսին գերծ է փացել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ՝ SMS-հաղորդագրությունները):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նըշված հանգամանքներից էլնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված՝ անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Մայիս ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 409 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 49.4 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում են դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2021թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
11971	1380556036	7547	750469888	158	20991281	4295	617866511	4487	471411115

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 63%-ն արդեն բավարարված է և ընդամենը 1 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.06.2022թ. դրությամբ (մլն/ ՀՀ դրամ)	Այդ թվում մայիս ամսվա հասույթ (մլն/ ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	8,906	2,194
Բնակիչ-բաժանորդներ	6,565	1,479
Իրավաբանական անձեր	2,341	715

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 324.0 մլն/ ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2022 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱՀԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.06.2022թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	702,409	577,778	82.26	34,863	25,868	74.
	Առանց ջրաչափի	32,160	1,482	4.61	1,099	10	0.91

Տվյալների բազայում 01.06.2022թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	874,031	401,011	45.88	38,676	11,278	29.16

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով: Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 5136 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 751 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2388	1962	81.9
գ.Պոռշյան	1622	1097	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5925	1876	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիրը:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 11121, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 11196, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1682, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2382, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1560, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 2598 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4360 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրազրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	303	131,693	24,487,264

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ





Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի մայիս ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 97.0%, ինչը 0.7% ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 77 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2022թ-ի մայիս ամսին, 2021 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 151 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը նվազել է 776 հազար կվտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 20976 ԿՎտ.ժ (4,42 %), այն դեպքում երբ նորակառույց շենքերի յոթ պոմպակայան ավելացել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 7 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 6783.7 կՎտ.ժ: Իսկ առանց այս պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի, այն կնվազեր 27759.7 ԿՎտ.ժ:



Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ուսումնասիրված հասցեներ

Հաշվետու ժամանակահատվածում 96 հասցեներում կատարվել է էլ. հաշվիչի ընթերցման, ցուցմունքների գույքագրման և պոմպակայանի զննման աշխատանքներ: Շարունի 26, Գ.Նժդեհի 58 հասցեի պոմպակայաններում կատարվել է ճնշման ռեղեների աշխատանքի կարգաբերում:



Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 32 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 15 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:


Թվով 395 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 297 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՋ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ: Թվով 9 հասցեներում հայտնաբերվել են ջրագծի վթարներ:

Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում 11 հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով.

- Արցախի 24/1 (Er-26)
- Ամիրյան 15 (Ke-10)
- Տիգրանյան 7 (Ar-67)
- Արշակունյաց 54/1 (She-103)
- Բագրատունյաց 22/3 (She-27)
- Ծերենց 5 (Sh-13)
- Գուլակյան 16բ (Ar-120)
- Արաբկիր 25փ. 2 (Ar-91)
- Հակոբյան 12 (Ar-133)
- Մունդուկյան 15ա (Ar-31)
- Մոսե 2նրբ. 82 (Ar-130)

Տեղադրված գումարային 127 ինվերտորային պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 56,125կՎտ.ժ կամ 25.42%:




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 37 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


● 2022թ. մայիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 703 847 ԿՎտ/ժամ (31,19%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 258 815 ԿՎտ.ժ/ամիս կամ 12,20%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն նվազել է 906 639 ԿԿտ.Ժ կամ 16,57 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են մայիս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Գյուղերի և քաղաքների ամբողջական տվյալների բազաների ստեղծում, թարմացում և կապվող ջրատար համակարգերի թարմացում, միավորում	Գյուղեր և քաղաքներ	65
Արմավիրի մարզի Խորոնք համայնքի, Լոռու մարզի Վանաձոր, ք. Հրազդան, Ջրառատի «Մամաներ» թաղամասի ջրամատակարարման ցանցի վերակառուցման տվյալների մուտքագրում ԱՏՀ	Մուտքագրում ԱՏՀ	1
Սյունիքի մարզի Ույծ և Հացավան համայնքների ջրամատակարարման բաշխիչ ցանցի տվյալների փոփոխում	համայնք	2
Արարատի մարզի Աշոտավան և Սիսավան գյուղերի ջրագծերի տրամագծերի թարմացում	գյուղեր	2
Կատարողական գծագրերի (ՊԿԱԾ) անցկացում ԱՏ համակարգ	Անցկացում համակարգ	1
Վայոց Ձորի մարզի գ. Շատին ջրամատակարարման բաշխիչ ցանցի ջրագծերի վերակառուցման տվյալների մուտքագրում ԱՏՀ	մուտքագրում	1
Ծաղկաձոր քաղաքի Չարենց փողոցի ջրագծի տվյալների մուտքագրում ԱՏՀ	մուտքագրում	1
Գյումրի քաղաքի լոգերների տեղադիրքի ճշգրտում	քաղաք	1
Երևանի Արաբկիր համայնքի ջրի բաշխիչ համակարգերի հիդրավլիկ մոդելավորման համար համակարգի ջրագծերի ուղղումներ և թարմացումները	քաղաք	1
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ –ի կողմից Վարձակալությամբ զբաղեցրած տարածքների թվայնացում	թվայնացում	1
ՃԿՓ-ի տվյալների բազաների ճշգրտում և լրացում	լրացում	1
Smart Monitoring խմբի հայտնաբերված վթարների բազավորում և թվայնացում:	թվայնացում	1
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	110
Նոյեմբերյան քաղաքի ջրագծերի հիդրավլիկ մոդելավորում	քաղաք	1
Վեդի, Մասիս, Արմավիր քաղաքների, Մրգաշեն և Արտամետ գյուղերի կոյուղագծերի թվայնացում	Գյուղեր և քաղաքներ	5
Քանաքեռավան գյուղի կոյուղագծերի ուղղում և թարմացում	գյուղ	1
Մրգաշեն և Նոր Արտամետ գյուղերի կոյուղագծերի ճշգրտում	գյուղեր	2
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	68
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	72619
Մարզային կոյուղու երկարությունն այս պահին փոփոխված տարբերակով	կմ	1765.3

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

Արարատյան ջրատար

Ջրատարի վրա նախորդ ամսվա ընթացքում սկսված փորձարկումներն ու աշխատանքները շարունակվել են: Գործող $D=1000$ մմ, $L=800$ մ ջրատարը փոխարինվել է փորձարկում անցած նույն պարամետրերն ունեցող ջրատարով:



Այս աշխատանքներին զուգահեռ նաև խցափակվել է Նորաբացի չոր խցում գտնվող ջրթող փականի ջրթափ խողովակը՝ $D=500$ մմ, $L=5$ մ: Այն դուրս էր փսացել ոռոգման ցանցի վերակառուցման ընթացքում: Կազմակերպվել է ջրատարի կանգառ և շինարարական աշխատանքներից հետո վթարային հատվածը փոխարինվել է գոյություն ունեցող ու բարվոք վիճակում գտնվող ջրատարով: Շինաշխատանքներից հետո ջրատարը լվացվել է և ախտահանվել, որից հետո միացվել է քաղաքի ջրամատակարարման ցանցին:



Արզնի 2



Ջրատարի վրա առկա է վթարային հատված, որտեղ նախկինում կատարված բազմակի վթարավերականգնողական աշխատանքներից հետո միջտարտահոսք էր փսում: Որոշվել է այդ $D=800$ մմ, $L=100$ մ հատվածը փոխարինել շինարարի ուժերով:

Կազմակերպված կանգառի ընթացքում շինարարը միացումներ է տվել գործող ջրատարին, իսկ «Արաբկիր» ՇՏ-ն կանխել է «Արզնի 2» և «Արզական» ջրատարների միացման խողովակի «Փոքր Մհեր»-ի մոտ գտնվող վթարը՝ ≈ 5 լ/վ արտահոսքով:



Քանաքեռական

Քանաքեռական

Գոտիավորման վարչություն

Քաղաք Գյումրի

● «Շիրակ» տեղամասի աշխատակիցների հետ ուսումնասիրություն է կատարվել Ամասիա համայնքի Հարավլավական թաղամասի ջրամատակարարման ցանցում, որը կառուցվել էր հետերկրաշարժյան տարիներին: Ջրամատակարարման ցանցը կառուցված էր օղակային սնուցմամբ՝ $D=100$ մ պողպատե ջրագծերով, որոնց վրա առկա էին բազմաթիվ վթարներ: Այս տարիների ընթացքում «Շիրակ» տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել էին նոր ՊԷ ջրագծեր, ուստի խցափակման եղանակով շահագործումից հանվել են $D=150$ մ, $L=190$ մ, և $D=100$ մ $L=1640$ մ պողպատե ջրագծեր՝ ապահովելով կայուն ջրամատակարարում նշված թաղամասում:



Քաղաք Վարդենիս




● Վարդենիս քաղաքի մերձակայքում գտնվող Սոթք գյուղում նույն գյուղի զորամասը սնող պոմպակայանի ջրաչափից հետո հայտնաբերվել է վթար $D=100$ մ պողպատե ջրագծի վրա, որը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 1,5$ լ/վ ջրաքանակ:

Քաղաք Սևան

● Սևան քաղաքում վթարաորոնողական աշխատանքներ կատարելու ընթացքում Նալբանդյան 57 հասցեի հարևանությամբ գտնվող դիտահորում վթարվել էր $D = 40$ մ փականը և Էներգետիկների 3 հասցեում՝ $D=100$ մ փականը: Վթարված փականները փոխարինելուց հետո ընդհանուր տնտեսվել է $Q = 3$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Ծաղկաձոր



● Ծաղկաձոր քաղաքի Մայիսյան փողոցում իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար այդ փողոցով անցնող $D=50$ մ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 2$ լ/վ ջրաքանակ:

Քաղաք Արուսյան

● Արուսյան քաղաքի 4-րդ միկրոշրջան 44 շենքի մոտ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար $D=150$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 10$ լ/վ ջրաքանակ:




Երևան



● Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է վթար Սերձավան գյուղի գորամասերին սնուցող $D=100$ մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 6$ լ/վ ջրաքանակ:

● «Արաբկիր» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Սոսեի փողոցով անցնող $D= 100$ մմ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 7$ լ/վ ջրաքանակ:



● «Արաբկիր» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Սունդուկյան 70 դիմաց Ակցեոնի շենքի մուտքագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 20$ լ/վ ջրաքանակ:

● «Քանաքեռ-Զեյթուն» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է Ուլնեցի-Պարույր Սևակ փողոցների խաչմերուկով անցնող վթարված ՊԷ ջրագիծ: Վթարված ջրագիծը խցափակվել է միացման կետից արդյունքում տնտեսելով $Q = 0,5$ լ/վ ջրաքանակ:



● «Շահումյան» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է վթար Անդրանիկ 62 հասցեի մոտով անցնող $D=200$ մմ ՊԷ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 10$ լ/վ ջրաքանակ:


● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Մայթ-Նովա 20 հասցեում գտնվող պոմպակայանի դուրս մղող $D=100$ մմ ջրագծից միացված $D=25$ մմ անհայտ ջրագծի վրա: «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից միացման կետից խցափակելուց հետո տնտեսվել է $Q = 2$ լ/վ ջրաքանակ և էլեկտրաէներգիա:



3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ


Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● **Քաղաք Մասիսի** «Արարատյան 3/4 քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար խցանված հեղուկ քլորի համակարգի 4կգ/ժ ինժեկտորը մաքրվել է մանր քարերից:



● Գյուղ Բուժականի Բուժական քլորակայանում մաքրվել է հիպոքլորիդի հաբի համակարգի խցանված ցիրկուլացիոն պոմպը և փոխարինվել է դոզատորի ժառանգված մեմբրանը, որն ապահովել է հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքը:

● **Քաղաք Արթիկ** «Ծաղկասար քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած վակուում կարգավորիչը փոխարինվել է նոր վերանորոգված վակուում կարգավորիչով:



● **Քաղաք Սպիակի** Ջրաշեն քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգի խցանված վակուում կարգավորիչը վերանորոգվել է տեղում:

● **Քաղաք Աշտարակի** Մաղմուսավան քլորակայանում հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած վակուում կարգավորիչը փոխարինվել է նոր վերանորոգված վակուում կարգավորիչով՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:




● **Քաղաք Երևան** Ավան Բարաջանյան 3/1 հասցեում վերանորոգվել է վակուում կարգավորիչ՝ պահեստային նպատակով:

● **Քաղաք Չարենցավանի** Ֆանտան քլորակայանում շարքից դուրս եկած ցիրկուլացիոն պոմպը փոխարինվել է նորով՝ սարքավորման անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:




● **Մեղրի քաղաքում** հարկադրված ջրանջատումներից հնարավորինս զերծ մնալու նպատակով ՔնԽՁՄԿ ծառայությունը վերջին երկու ամսվա ընթացքում «Զվար» խմելու ջրի մաքրման կայանում՝ կախված նստվածքով պարզարաններում, տեղադրել է կոագուլավորման գործընթացը ապահովող սարքավորումներ, պոմպային ագրեգատներ, ինչպես նաև արագ գործողության ֆիլտրերը լրաբեռնել է կվարցային ավազով, փոխարինել է անսարք տեխնոլոգիական փականները, մասնակի վերանորոգել է կոռոզիայի ենթարկված մետաղական մրրկային խառնարանը, կախված նստվածքով պարզարաններում հավասարաչափ հոսք ապահովելու նպատակով բոլոր ջրհավաք խողովակները բերվել են մեկ հարթության և կայանի բնականոն անխափան աշխատանքն ապահովելու նպատակով կատարվել են կարգաբերման աշխատանքներ: Նշված աշխատանքների արդյունքում հետագայում, ըստ կայանի առավելագույն հնարավորության, արագահոս գետերից հոսող բարձր պղտորվածությամբ ջրերը, կայանը կկարողանա մաքրել, ինչը նախինում հնարավոր չէր:



3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիր

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 39804 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 12258 զանգ , որից Երևան քաղաքինը եղել է 9647 զանգ (78,7 %), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2611 զանգ (21,3%):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 27546 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 20614 զանգ (74,8%), իսկ մարզերինը՝ 6932 զանգ (25,2%):
- 2021թ. մայիսի համեմատ՝ 2022թ. մայիս ամսին 1.98 %-ով նվազել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը նվազել է 17,40 %-ով:
- 2021թ. մայիսի համեմատ՝ 2022թ. մայիս ամսին 99%-ով ավելացել է հայտարարությունների լուսմա ավտոմատ ծառայության միջոցով, 30%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, իսկ 5 %-ով նվազել է 5 րոպեից ավել զանգերի քանակը:



	Ստորաբաժանում	2021 մայիս	2022 մայիս	
Առևտրային	Շտաբներ	12505	12258	-1.98%
	Երևան	9876	9647	-2.32%
	Մարզեր	2629	2611	-0.68%
	Շահագործում	33348	27546	-17.40%
Շահագործում	Հարավ	12151	9713	-20.06%
	Շենգավիթ	2140	1510	-29.44%
	Կենտրոն	2736	2292	-16.23%
	Հյուսիս/Ավան Լոր Լորք/	1902	1441	-24.24%
	Երեբունի	2068	1445	-30.13%
	Պոմպեր	748	669	-10.56%
	Մարզեր	2557	2356	-7.86%
	այդ թվում կոյուղու վթար	65	56	-13.85%
	այդ թվում դիտահորի խցանում	2683	2499	-6.86%
	Հյուսիս	21197	17833	-15.87%
	Արարկիր	3007	6017	100.10%
	Քանաքեռ-Զեյթուն	2350	1347	-42.68%
	Մաշտոց	4522	2811	-37.84%
	Շահումյան	3974	1953	-50.86%
	Պոմպեր	2053	1129	-45.01%
	Մարզեր	5206	4576	-12.10%
այդ թվում կոյուղու վթար	120	129	7.50%	
այդ թվում դիտահորի խցանում	3791	4490	18.44%	
	Շտաբներ	45853	39804	-13.19%

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Եթե ապրիլին Հանրային կապերի բաժինը /ՀԿԲ/ միայն նշեց Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի / ՊԿԱՕ – 2022/ մեկնարկը, ապա մայիսին այս մասին հրապարակեց շատ ավելի ընդարձակ հաղորդագրություն: Ցույց տալու համար նախաձեռնության կարևորությունը, հանրությանը տեղեկացվեց, որ ջրաշինարարության սեզոնն այս տարի սկսվել է ավելի շուտ ու ավելի լավ նախապատրաստված, քան նախորդ տարիներին:

Դեռևս ձմռանը կազմվել է վերակառուցման ենթակա օբյեկտների ցանկը, Մշակվել են աշխատանքների նախահաշվային-նախագծային փաստաթղթերը, Հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ, Անցկացվել են կապալառու շինկազմակերպությունների մրցույթներ: Ընդհանուր առմամբ ՊԿԱՕ-ով նախատեսվում է ավելի քան 20 ներդրումային ծրագրեր իրականացնել: Խոսքը ինչպես նոր ջրագծերի ու կոյուղագծերի կառուցման ու վերակառուցման մասին է, այնպես էլ ջրաղբյուրներում, մյուս ինժեներական կառույցներում կատարվող աշխատանքների: Դրանք կընթանան թե՛ Երևանում, թե՛ մարզերում, ու իրենց ծավալով չեն զիջի ռեկորդային ՊԿԱՕ-2021-ին:



ՊԿԱՕ-ի շրջանակներում արդեն մեկնարկել է ամենախոշոր՝ 400 մլն դրամ արժողությամբ ջրագծերի վերակառուցումը Երևանի Նոյ թաղամասում: Դրան կհաջորդեն Երևանի Այգեձոր և Աջափնյակ թաղամասերի, Խաղաղ Դոնի փողոցի ջրագծերի, Նոր Նորքի 6, 7, 9 բնակելի զանգվածների կոյուղատար ցանցի վերակառուցումը, Արզնի գյուղի, Աշտարակ քաղաքի ջրագծերի, իսկ Էջմիածին քաղաքում՝ նաև կոյուղու ցանցի վերակառուցումը: Ավելին, ՊԿԱՕ-ով նախատեսվածից բացի՝ համակարգում զգալի աշխատանք է իրականացվելու նաև ընկերության շահագործման տեղամասերի և տեխնիկական ծառայությունների ուժերով: Այդ ծրագրերն ավելի բազմաքանակ են, ընդգրկում են տասնյակ բնակավայրեր և միտված են սպառողներին հուզող հրատապ, ընթացիկ խնդիրների շուտափույթ լուծմանը: Մասնավորապես, մայիսին լուսաբանվել են աշխատանքները Արուվանում, Կապանում, Շենգավիթում, Արաբկիրում, Էրեբունիում, Մասիսում, Մաղմուսավանում, «Կարբի» պոմպակայանում:

Սակայն առավել կարևոր է եղել հանրությանը հրատապ ներկայացնել իրավիճակը Մեղիի տարածաշրջանում, որտեղ տարիներով կուտակված խնդիրների լուծման համար Վեոլիան զգալի աշխատանքներ է իրականացնում: Տվյալ թեմային ՀԿԲ-ն մայիսին անդրադարձել է 2 անգամ, ներկայացնելով «Զվար» ՋՄԿ-ում, դրա լեռնային գեոտեխնիկներում և քաղաքի բաշխիչ ցանցում աշխատանքները: Նաև ջրանջատման են լուսաբանվել հանրության հնարավոր բողոքները կանխելու նպատակով: Ընդ որում, դրանցից առավել կարևորների և լայնածավալների դեպքում ներկայացվել է տարվող աշխատանքների պատճառները և ընթացքը: Այդ թվում՝ Ներքին Պտղնու «Գազի հորերի» տարածքում «Արզնի 2-Երևան» մայրուղային ջրատարի վթարային շուրջ 100 մետրանոց հատվածի փոխարինումը, «Արարատյան-Երևան» մայրուղային ջրատարի վթարի վերացումը, «Ապարան-Երևան» ջրատարի և դրանից սնվող «Ղավթաշեն Վերին ՕԿՁ»-ի մատակարարման սխեմայի վերանայումը:



Մայիսին ՀԿԲ-ի ուշադրության ներքո է եղել նաև ամռան սեզոնի նախապատրաստական աշխատանքները: Շոգերով պայմանավորված ջրի սպառման ծավալների ավելացումը հաշվի առնելով, Վեոլիա Ջրի համակարգում իրականացվել են լրացուցիչ միջոցառումներ: Այսպես, «Էջմիածին» շահագործման տեղամասը Էջմիածնում ջրի ավելացող պահանջարկը բավարարելու համար «Ղազարավան» աղբյուրից միացում է տվել դեպի Էջմիածին ձգվող 600 մմ-ոց ջրատարին: Իսկ Քլորի և խմելու ջրի կայանների մաքրման ծառայության աշխատակիցները մեկ ամսվա ընթացքում «փախչող» ջրերի հավաքման արդյունքում «Ղազարավան-Էջմիածին» ջրատարի ջրաքանակն ավելացրել են վայրկյանում 12 լիտրով: Իր հերթին, «Շենգավիթ» շահագործման տեղամասը վերակառուցել է «Արարատյան - Երևան» մայրուղային ջրատարը: Այսպես, «Արարատյան - 3» ջրատարի վրա շահագործումից հանվել է հնամաշ և վթարային 2 հատված և խողովակով միացվել հարևան «Արարատյան - 5» ջրատարին: Այս ամենի արդյունքում ամռանը հնարավոր կլինի խուսափել վթարային ջրանջատումներից ու ապահովել մայրաքաղաքի հարավային շրջանների ու Մասիսի տարածաշրջանի կանոնավոր ջրամատակարարումը:

Հաշվետու ամսին չեն մոռացվել համապետական տոները, հիշարժան իրադարձությունները և Վեոլիա Թիմի ձեռքբերումները: Այսպես, Մայիսի 1-ի՝ Աշխատանքի օրվա առթիվ բարեմաղթանքներ են հղվել համակարգի աշխատողներին, նշվել է Մայիսի 9-ը՝ Հաղթանակի և Խաղաղության տոնը, տնօրինությունը շնորհավորել է հանրությանը՝ Առաջին հանրապետության օրվա Մայիսի 28-ի առթիվ:

Մայիսին ընդհանուր առմամբ իրականացվել է 28 հրապարակում, ընդգրկելով ընկերության գործունեության գրեթե բոլոր ուղղությունները, չհաշված խոշոր ջրանջատումների, մրցույթների ու թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները:

Հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia)-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. [Veolia.am](https://www.veolia.am) պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և [youtube Veolia Jur](https://www.youtube.com/channel/UC...) էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*

5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● Բաժինը, ղեկավարվելով ընկերության գլխավոր տնօրենի 24 հունվարի 2022թ-ի N 02 Լ հրամանի և հրամանով հաստատված կարգի պահանջներով, Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման (ԲՌԿ) ստանդարտի պահանջներով՝ հաշվետու ամսում մշակեց «Երթնեկությունը աշխատատեղում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի վերաբերյալ դասընթացի պրեզենտացիայի նյութը:

5.2. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

● ՈԱԱ Բաժին, հիմք ընդունելով Ընկերության Գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 02 Լ հրամանի պահանջները, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ, 247-րդ հոդվածի 3-րդ մասի և 254-րդ հոդվածի, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ հաստատված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջներով և ելնելով Վեոլիա Գրուպի «Վտանգավոր նյութերի, քիմիկատների տեղափոխում, պահեստավորում գործածում» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջներից, Ընկերության գլխավոր տնօրենի 2022 թվականի մայիսի 6-ի N 2619 Ա հրամանի հիման վրա Ընկերության քլորակայանների ինժեներատեխնիկական անձնակազմի՝ քլորի օպերատորների և պատասխանատուների թվով 100 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց 3 մոդուլից բաղկացած ստորն ներկայացվող մասնագիտական որակավորման առկա դասընթացներ/գիտելիքների ստուգում՝

- ՝ «Քլորակայանի օպերատորի և քլորակայանի շահագործման պատասխանատու անձի որակավորման» դասընթաց/գիտելիքների ստուգում,
- ՝ Վեոլիա Գրուպի «Վտանգավոր նյութերի, քիմիկատների տեղափոխում, պահեստավորում գործածում» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջները դասընթաց:
- ՝ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» դասընթաց:



● Բաժինը, ղեկավարվելով Ընկերության գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի 02 Լ հրամանի պահանջներով, ինչպես նաև «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 88-րդ և 254-րդ հոդվածի, Վեոլիա Գրուպի «Ամբարձման աշխատանքներ» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջներով, Ընկերության գլխավոր տնօրենի 25-ը մայիսի 2022 թվականի N 2968 Ա հրամանի հիման վրա, Ընկերության թվով 7 ամբարձիչ ավտոմեքենա շահագործող աշխատողների(վարորդների) համար կազմակերպեց և իրականացրեց «1000 կգ և ավել բեռնաբարձությամբ ամբարձիչ ավտոմեքենայի անվտանգ շահագործման պահանջները» վերաորակավորման ստորն ներկայացվող երեք մոդուլից բաղկացած առկա դասընթաց և գիտելիքների ստուգում:

- ՝ «Ամբարձման աշխատանքներ» Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի կառավարման ստանդարտի պահանջներ


դասընթաց,

▶ «1000 կգ և ավել բեռնաբարձությամբ ամբարձիչ ավտոմեքենայի անվտանգ շահագործման պահանջներ» վերաորակավորման դասընթաց և գիտելիքների ստուգում:

▶ Մոդուլ 3 «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» դասընթաց:




● Բաժինը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 28/09/2005 թվականի 2388-Ն որոշմամբ հաստատված «Գազաբալոնային համակարգով կահավորված ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգի» պահանջներով, «Պրեմիում գազ» ՍՊԸ-ի հետ համատեղ կազմակերպեց և իրականացրեց Ընկերության գազաբալոնային համակարգով կահավորված ավտոտրանսպորտային միջոցներ շահագործող թվով 8 աշխատակցի համար հեղուկ և սեղմված բնական գազով շահագործվող մեքենաների վարորդների հրահանգավորում և վկայականների տրամադրում:



5.3. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայքեր Ընկերության թվով 14 քլորակայանում, 10 պոմպակայանում, 1 ՋՄԿ-ում, 1 ԿՄԿ-ում, 3 ՕԿՁ-ում և 4 կաթսայատանը: Ստուգայքերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսուճաստիպվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 11 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով զծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:



5.4. ԱՎՕ-ՆԵՐԻ և ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Բաժինը, հաշվետու ամսում, համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի, թվով 1 ամբարձիչ ավտոմեքենա, որպես արտադրական վտանգավոր օբյեկտ, գրանցեց Արտակարգ Իրավիճակների Նախարարության ԱՎՕ-ների ռեեստրում և ստացավ ԱՎՕ վկայական:

● Հաշվետու ամսում, համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի, «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊԸ փորձագետների կողմից փորձաքննության ենթարկեց Ընկերության ԱՎՕ հանդիսացող թվով 25 արտադրական վտանգավոր օբյեկտ (4 կաթսայատուն, 2 քլորակայան, 1 ամբարձիչ ավտոմեքենա, 18 ամբարձիչ սարքավորում), որից հետո տրվեց դրական եզրակացություններ:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

6.1. Համակարգչային ցանց

Մայիս ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Ներդրվել է, Գրուպի կողմից ընտրված, նոր հակավիրուսային համակարգ:
- Մի շարք աշխատանքներ են իրականացվել «Kaspersky» հակավիրուսային համակարգի հեռացման ուղղությամբ:
- Իրականացվել են նոր համակարգիչների խմբաքանակի պահեստավորման, գույքագրման և այլ աշխատանքներ:
- Ուսուճասանձիվել են ընկերության աշխատակիցների առկա համակարգիչների պառամետրերը: Մայիս ամսին սկսվել է տվյալ համակարգիչները նոր համակարգիչներով փոխարինման, վերաբաշխման աշխատանքները:
- Մի շարք քննարկումներ և հանդիպումներ են իրականացվել «Telecom Armenia» ընկերության հետ՝ հեռահաղորդակցության կապուղիների բարելավման, կարգավորման, սխալների շտկման ուղղությամբ:
- Մի շարք մարզերում մոնիտորինգային աշխատանքներ են իրականացվել կապի կարգավորման ուղղությամբ, որի արդյունքում՝ ի հայտ են եկել մի շարք խնդիրներ: «Telecom Armenia» ընկերությունը պարտավորվել է կարգավորել խնդիրները:
- «Telecom Armenia» ընկերության հետ կնքված համաձայնագրի շրջանակներում շուրջ 16000000 դրամի բջջային և IP հեռախոսներ են տրամադրվել Veolia ընկերությանը, որոնք բաշխվել են ըստ պահանջի:
- Իրականացվել է վերոնշյալ սարքավորումների գույքագրման և վերաբաշխման գործընթացը:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Մայիս ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

● Ինտերակտիվ համակարգին ինտեգրվել են «Հայ Փոստ» ընկերության հիբրիդ և Էնվելոփ համակարգերը:

● Մի շարք աշխատանքներ են իրականացվել վերոնշյալ համակարգերն ինտերակտիվ համակարգի աշխատանքի հետ միացնելու ուղղությամբ:

● Ակտեր Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է մայիս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Տեղամաս	Ինտերակտիվ համակարգի արձանագրություն		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Յրուսիս	4	10.2	2.0
Էրեբունի	17	12.1	2.1
Շենգավիթ	6	3.6	0.7
Կենտրոն	3	1.3	0.3
Արաբկիր	3	1.4	0.3
Մաշտոց	25	7.2	1.2
Ճահումյան	3	1.1	0.2
ԱԿԲ	78	44.4	8.4
Լոռի	7	3.5	0.7
Շիրակ	19	4.9	0.9
Արթիկ	2	0.6	0.1
Արարատ	14	1.6	0.3
Աբովյան	19	14.7	2.6
Հրազդան	14	3.9	0.7
Ալավերդի	4	1.3	0.3
Աշոցք	1	0.5	0.1
Արտաշատ	8	1.4	0.2
Գավառ	10	2.4	0.4
Գորիս	1	0.5	0.1
Դիլիջան	4	1.6	0.3
Էջմիածին	5	1.5	0.3
Թալին	2	0.3	0.1
Իջևան	29	2.8	0.5
Կապան	10	5.2	0.9
Մասիս	2	0.7	0.1
Սևան	1	0.4	0.1
Աշտարակ	21	5.8	1.0
Զարենցավան	7	3.3	0.6
Սիսիան	1	0.5	0.1
Սպիտակ	2	0.3	0.1
Ստեփանավան	1	0.5	0.1
Ընդամենը	323	139.4	25.8

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ) Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է մայիս ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Տեղամաս	Լաբորատորիա			
	Միջամտություն		Անսարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Յյուսիս	4	4.95	36	0.13
Էրեբունի	16	8.84	80	1.23
Շենգավիթ	15	10.98	64	0.71
Կենտրոն	6	1.80	62	1.20
Արաբկիր	3	1.03	60	0.51
Մաշտոց	17	9.00	61	0.46
Շահումյան	14	9.67	77	0.45
Եղվարդ	7	1.78	56	0.19
Քանաքեռ-Զեյթուն	4	1.56	57	0.37
Լոռի	2	0.77	10	0.06
Շիրակ	15	2.63	65	0.32
Արթիկ	13	6.25	74	0.50
Արարատ	5	0.60	30	0.11
Արուսյան	6	3.38	46	0.45
Յրազդան	5	0.88	15	0.02
Ալավերդի	9	1.92	46	8.37
Աշոցք	3	1.27	7	0.03
Ապարան	1	0.17	5	0.02
Արտաշատ	1	0.31	21	0.10
Բերդ		-	12	0.08
Գավառ	4	1.50	35	0.32
Գորիս	3	1.29	19	0.10
Դիլիջան	2	1.70	1	0.00
Եղեգնաձոր	2	1.03	15	0.07
Էջմիածին	2	1.91	24	0.24
Թալին	1	9.54	3	0.00
Իջևան	1	0.09	3	0.01
Կապան	1	0.52	9	0.05
Մասիս	7	2.41	35	0.39
Մարտունի		-	3	0.02
Մեղրի	3	1.74	3	0.02
Արմավիր	5	1.93	48	0.38
Ձերմուկ	5	1.29	3	0.02
Սևան	3	0.73	9	0.04
Վայք	1	0.52	18	0.11
Աշտարակ	4	1.60	19	0.14
Չարենցավան	5	1.60	43	0.36
Սիսիան	6	2.77	13	0.13
Սպիտակ		-	1	0.01
Ստեփանավան	7	3.61	17	0.58
Տաշիր	1	0.52	3	0.03
Ընդամենը	209	104.08	1208	18.33



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am